ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՐԴԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Լ. Մ.

Հայ-իրանական առնչությունները սկզբնավորվել են դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակում և ներառել ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներ: Դարերի ընթացքում հայ մտավորականությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել պարսիկ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության նկատմամբ և դրանց նվիրված գիտական ուսումնասիրություններով հարստացրել մեր պատմագրությունը, բանասիրությունն ու գեղարվեստական գրականությունը: Դրանք հետագայում պարսիկ խոշոր գիտնականների ու հետազոտողների համար հիմք են դարձել ըստ արժանվույն գնահատելու հայ պատմագրությունն ու հայկական աղբյուր-ները, որոնք Իրանի պատմության և մշակույթի ամենատարբեր խնդիրների վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ են պարունակում:

Ինչպես նշում է պարսիկ մեծանուն գրականագետ Ս. Նաֆիսին, «Երիտասարդությանս օրից մինչև այժմ միշտ էլ Թեհրանի բոլոր պարսիկներից ավելի լավ եմ ծանոթ հայկական գրական և գիտական շրջաններին և չեմ կարծում, որ որևէ մեկը հայ մտավորականության հետ իմ չափ մերձեցում ու շփում ունեցած լինի և իմ չափ ծանոթ լինի հայ հին ու նոր գրականությանը: Ես դա իմ կյանքի պարծանքներից մեկն եմ համարում, որովհետև այդ միջոցով նկատել եմ հայերի շաղկապումը այս երկրի պատմության ու գրականության հետ»[1]:

Դարերի պատմություն ունեցող հայ-իրանական գրական հարաբերությունները պարունակում են փոխադարձ ճանաչողության և գնահատման, թարգմանությունների և ազդեցության անհամար իրողություններ, որոնք մեծ խթան են ոչ միայն երկու ժողովուրդների հոգևոր մերձեցման, այլ նաև գեղարվեստական նոր մտածողության զարգացման համար: Հայ ժողովրդի ստեղծած դարավոր մշակութային բարձր արժեքների, հազարամյակներով կուտակած իմաստության հանդեպ տածած խոր ակնածանքն արտահայտություն է գտել Իրանի բազմադարյան գրականության մեջ: Բազմաթիվ արժեքավոր գիտական հետազոտություններ են կատարել հայագետները և իրանագետները, որոնք իրենց ուշադրությունն են սևեռել իրանական դասական գրականության մեջ հայկական թեմայի ուսումնասիրություններին, ինչպես նաև հայ և իրանական էպոսների համեմատական վերլուծություններին:

Հայկական թեման և հայի կերպարն ինքնատիպ դրսևորում են գտել XX դարասկզբի «պերսիանիստական» ազգայնական գրական շարժման մեծահամբավ ներկայացուցիչների՝ Մոհամմադ Ալի Ջա-

---

[1] **Փահլևանյան Հ. Լ.,** *Իրանահայ համայնքը (1941-1979), Ե., 1989, էջ 222:*

մալզադեի, Սադեղ Հեդայաթի, Բոզորգ Ալավիի ստեղծագործություններում: Նշենք նաև, որ Եվրոպայում, վտարանդիության տարիներին երեք արձակագիրներն էլ սերտ կապեր են ունեցել հայ առաջադեմ մտավորական շրջանակների հետ: Ս. Հեդայաթն ու Բ. Ալավին մասնակցել են իրանահայ անվանի նկարիչ Անդրե-Դարվիշ Սևրյուգյանի[2]՝ Փարիզում հիմնադրած փիլիսոփայական խմբակի հավաքներին, որոնց ընթացքում էլ իր ժուժկալ սուֆիական վարքագծի համար մեծանուն նկարչին կնքել են Դարվիշ մականվամբ:

1915-ին Բեռլինից Բաղդադ մեկնելու ճանապարհին արդի իրանական նորավեպի մեծ վարպետ Մոհամմադ Ալի Ջամալզադեն, իջեվանելով Ստամբուլում և Հալեպում, ականատես է լինում Հայոց ցեղասպանության սահմռկեցուցիչ տեսարաններին ու գաղթի սովահար ճամփաներով շարժվող մարդկային հոծ բազմությունների ան-պատմելի զրկանքներին, որոնց մասին հետագայում նա գրում է «Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ իմ հետազոտությունները» խորագիրը կրող բացառիկ աշխատության մեջ[3]:

Ժամանակակից իրանական գրականության մեջ հայկական թեման կամ հայի կերպարը քննելիս՝ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել հայ կնոջ կերպարին: Հայ ընտանիքի ավանդական, բարոյական արժեքներին մշտապես անդավաճան՝ իրանահայ կինը եղել է ու կմնա հայկական համայնքի ազգային, կրոնական ինքնությունը պահպանող կանացիության խորհրդանիշ: Ի դեպ, արդի իրանական պոեզիայի «նոր բանաստեղծության» գլուխգործոցներից մեկը՝ հռչակավոր բանաստեղծ Ահմադ Շամլուի «Աիդան հայելու առաջ» սիրային պոեմը, նվիրված է նրա պաշտելի կնոջը՝ հայուհի Աիդա Սարգսյանին:

Հայ կնոջ կերպարը լավագույնս դրսևորվել է Բ. Ալավիի «Ճամպրուկը» (1934) ժողովածուի մեջ ընդգրկված «Սենյակիս պատմությունը» պատմվածքում: Տասնյոթ տարի ամուսնուն կորցրած մադամ[4] Հակոբյանը միայնակ էր մեծացրել իր երկու որդիներին՝ Արտաշեսին և Արշավիրին: Եվ ահա տարիներ անց գործունյա և ճարպիկ այս կինը, որը (բոլոր հայերի նման պարսկերեն խոսում էր հայկական շեշտադրությամբ) մոր հոգին պատած անդառնալի վշտով պատմում է սիրելի որդու՝ Արշավիրի սենյակի ողբերգական պատմությունը: Տարիներ առաջ սենյակը վարձակալած բարձրահասակ, կապուտաչյա ռուս կինը բուժման էր բերել Թեհրան իր հաշմանդամ գերմանացի ամուսնուն՝ պրն. Շուլցին: Շիկահեր կինը թեթև սիրա-

---

[2] *Անդրե Սևրյուգյանը ուշ Ղաջարական շրջանի համբավավոր լուսանկարիչ Անտոն Խան Սևրյուգինի որդին է, որը 1920-ական թթ. ձեռնամուխ է լինում Ֆիրդուսու «Շահնամեի» թեմաներով գեղանկարների շարք ստեղծելու գործին, շուրջ 10 տարի անց դրանք ցուցադրում մեծ բանաստեղծի 1000-ամյա հոբելյանին: Նշանավոր են նաև Դարվիշի՝ Օ. Խայամի քառյակների պատկերազարդումները:*

[3] *Նշենք նաև, որ պարսիկ ընթերցողին Մեծ եղեռնի վերաբերյալ հավաստի տեղեկություններ և լուսաբանումներ տալու նպատակով 1975 թ. հայտնի պատմաբան է. Ռայինը լույս է ընծայել «Հայերի ջարդը» ուսումնասիրությունը:*

[4] *Փեհլևիների օրոք քրիստոնյա կանանց ու տղամարդկանց դիմում էին ֆրանսերեն՝ մադամ և մսյո ձևերով:*

յին կապի պատճառով կործանում է իր և երիտասարդ Արշավիրի կյանքը: Մադամ Հակոբյանը չէր էլ կարող պատկերացնել, թե որքան նման կարող են լինել երիտասարդ ռուս կնոջ, հաշմանդամ գերմանացի ամուսնու և անծանոթ, բարեկիրթ հայ երիտասարդի բարդ ու խճճված հարբերությունները պրն. Շուլցի՝ ընթերցանության համար գնած «Գիտնականի կինը» պատմվածքի հերոսների ճակատագրական հարաբերություններին: Որդու սենյակի դռները հավերժ փակվել էին բոլորի առջև: Որդեկորույս մոր համար սենյակը դարձել էր թախծալի մի սրբատեղի, որտեղ նույնիսկ այն երկու թառամած ծաղկեփնջերն էին վերարթնացնում 1932-ի տարեմուտի դաժան գիշերվա թողած դառնագին հիշողությունները:

Հայ մոր կերպարում բնավորության, վարքագծի մեջ ընդգծված բարության ազնվության, բարեպաշտության դրական հատկանիշների մասին է պատմում հետհեղափոխական շրջանի մեծահամբավ կին արձակագիր Մունիրու Ռավանիփուրի «Սատանայի քարերը» պատմվածաշարի՝ «Հերոս» խորագրով հուզիչ պատումը: Այն անդրադառնում է 1980-1988 թթ. Իրան-իրաքյան պատերազմի ծանր տարիներին մոր վերապրած ողբերգությանը՝ նրա դառը ճակատագրի մեջ հատկապես ընդգծելով ազգային կերտվածքի առանձնահատկությունները: Հասմիկը, որի զավակները պատերազմի հետևանքով բրոնել էին տարագրության ուղին, այլևս անկարող էր դիմանալու մենությանն ու վշտին: Դատարկ տան սառը պատերը և զավակների մանկության վերհուշը ցավով էին պատել դառնացած մոր հոգին: Հասմիկի համար հոգեհարազատ էր դարձել այն գերեզմանատունը, որտեղ հանգչում էր զավակների մանկության մտերիմ ընկերը՝ ազգությամբ պարսիկ Ալին: Նա հարազատ մոր նման սգում էր երիտասարդ տղայի մահը: Ալիի մահվան ծանր գույժը լսելուց հետո, թրվում էր՝ ընդմիշտ փակվել էին կյանքին դառնալու նրա բոլոր ուղիները: Հասմիկն իրեն համակած վիշտն ու տառապանքը տանում էր լռելյայն ու մեծագույն համբերությամբ: Սակայն հայազգի կնոջ համար ծանր էր զգալ հարևան կանանց օտար հայացքներն ու լսել նրանց հեգնական խոսքերը: Նրանք անկարող էին հասկանալ արտաքուստ զուսպ ու հավասարակշռված հայ կնոջ վիշտն ու փխրուն հոգին՝ «Բարին ընդ ձեզ, տիկի՛ն, դուք տարբեր եք մեզանից»[5]:

Մեծ համակրանք տածելով հայերի հանդեպ և պատմվածքը նվիրելով պարսկահայ մշակութային գործիչ Ժանետ Լազարյանին՝ հեղինակը փորձել է կերտել ազգային նկարագրին հավատարիմ հայ կնոջ իրական ու իմաստուն կերպար: Մ. Ռավանիփուրը խորությամբ է ընդգծել Իրան-իրաքյան պատերազմի դաժան փորձություններն ու տագնապները, մարդկային կորստի համընդհանուր այն ցավն ու կսկիծը, որ պատել էր Իրանում բնակվող յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա ազգային ու կրոնական պատկանելությունից:

Ուշագրավ է հայ կնոջ կերպարի քննությունը դարասկզբի իրանական պատմավիպագրության մեջ: XIX դ. ռուս-իրանական պատե-

---

[5] **Ghanoonparvar M. R.** *Introduction (Muniru Ravanipur, Satan's stones, edited with the introduction by M. R. Ghanoonparvar, Austin, 1996, p. ix).*

բազմի տարիներին հայուհու և պարսիկ երիտասարդի արգելված սիրո ողբերգական ավարտի, մարդկային ճակատագրերի խեղաթյուրման մասին է Ռ. Ջուլայիի «Յալդայի զարհուրելի գիշերը և հարբեցողի պատումը» (1990 թ.) վեպը: Պատմական փաստերից զատ, վեպում հեղինակը բացահայտել է ազգային և կրոնական փոքրամասնության՝ իրանահայ համայնքի ավանդական ու բարոյական նկարագիրը՝ շեշտադրելով համայնքին հավատարիմ հայ կնոջ վարքագիծը[6]:

Հայուհու կերպարին են անդրադարձել իրանական արձակում սրբամիտ, երգիծական ստեղծագործություններով հայտնի Զ. Բեհրուզին՝ «Իրանի շահը և հայ տիկինը» (1927 թ.) պատմական ստեղծագործության մեջ, ինչպես նաև Մ. Քազեմին՝ հայ ընթերցողին քաջածանոթ «Սարսափելի Թեհրան» (1922 թ.) վեպում:

Իրանահայ համայնքի ազգային գունեղ կոլորիտը գեղարվեստական արտահայտություն է գտել հետհեղափոխական շրջանի ճանաչված գրող, ազգությամբ հայ Զոյա Փիրզադի ստեղծագործություններում: Զ. Փիրզադը արդի իրանական արձակի եզակի կին ստեղծագործողներից է, որին շնորհվել են Իրանի՝ գրականության բոլոր պատվավոր մրցանակները: 2002 թ. լույս ընծայվեց նրա «Ես ուզում եմ հանգցնել լույսերը» վեպը, որն ամիջապես հայտնվեց գրողների և գրականագետների ուշադրության կենտրոնում: 2002 թ. վեպն արժանացավ մեծանուն գրող Հուշանգ Գոլշիրիի անվան, Յալդայի, Տարվա գիրք, Մեհրեգանի պատվավոր գրական մրցանակ-ներին:

«Ես ուզում եմ հանգցնել լույսերը» վեպի իրադարձությունները տեղի են ունենում 1960-ականի Իրանի հարավ-արևմուտքում գրտնվող Աբադան նավթարդյունաբերական քաղաքում: Հայկական համայնքի ազգային կենցաղի, մարդկային հարաբերությունների գունեղ նկարագրությունների մեջ գրողը պատկերում է ցավի, կարոտի, երազի, սիրո, բաժանումի՝ մարդկային զգացումների մի հարահոս շղթա: Վիպական հյուսվածքի կենտրոնում է գլխավոր հերոսուհին՝ Կլարիսը, որն իր ողջ կյանքը նվիրել էր ամուսնուն և երեք զավակներին: Նրբազգաց ու երազկոտ հայուհու՝ առօրեական հոգսերի խունացած գունապնակին լույս էր տալիս այն թախծոտ, անպատասխան սիրո զգացումը, որը նա ամուր փակել էր հոգու գաղտ-նարաններում:

Իրանահայ գաղութի կոլորիտային կտավներ են ներկայացված նաև Զ. Փիրզադի 2003 թ. լույս ընծայած «Զատկի տոնի նման մեկ օր» պատմվածաշարում: Հեղինակի համար Զատկի տոնակատարությունը մանկության ամենավառ հուշերից է, որը նույնացվում է մեծ մայրիկի տան, նրա լուսադեմ կերպարի, բազմաբույր խոհանոցի, անհոգության, ծիծաղի, հարազատների ջերմության՝ չխամրող զգացողությունների հետ:

Իրանահայ գաղթօջախի պատմական գոյության վառ վկայությունն է Նոր Ջուղան: Այն հայրենիքից հեռու գտնվող ազգային մը-

[6] **Abramson G.** *and* **Kilpatrick H.** *Religious Perspectives in Modern Muslim and Jewish Literatures, London, New York, 2005, p.170-172.*

շակույթի, կրթության, գիտության և արվեստի, գրահրատարակչության կարևոր կենտրոններից է: Բռնագաղթի ենթարկված և օտար միջավայրում հանգրվան գտած հայությունը այլ կրոնի, բարքերի ու սովորույթների առկայության պայմաններում ոչ միայն չտարրալուծվեց, չկորցրեց իր ազգային դիմագիծը, այլև ստեղծեց կազմակերպված համայնք, ունեցավ հավաքական կյանք, անաղարտորեն պահպանեց իր մայրենին, ազգային սովորույթներն ու դավանանքը[7]:

Նոր Ջուղային է նվիրված հետհեղափոխական շրջանի երիտասարդ ստեղծագործող Ֆարխոնդե Աղայի «Սատանայից սովորեց ու այրեց» վեպը: Վեպի ինքնատիպ խորագիրը վերցված է «Սպահանի Ջուղայի պատմությունը»եղերերգության (որը նվիրված է Ջուղայի ավերածություններին) վերջին երկու տողերից. «Սատանայից սովորեց ու այրեց, այնժամ խելագար դարձավ ու չդիմացավ»[8]:

Ֆ. Աղայի վեպը Նոր Ջուղայեցի հայ թափառաշրջիկ կնոջ դրամատիկ ու ողբերգական ճակատագրի իրական պատմություն է, որը վերցված է նրա իսկ օրագրերից:

Հայ մարդու ազգային բարձր՝ բարոյական, ազնիվ նկարագիրը կարևոր շեշտադրում է ստացել հետհեղափոխական իրանական արձակում: Հատկանշական է, օրինակ, Է. Ֆասիհի[9] «Վերջին մենությունը» պատմվածքը: Վաշինգտոնի «Օմար Խայամ» գինետուն-ճաշարանի ծեր սպասավոր Արմենակը հաճախորդներին գրավում էր իր ազնվազարմ կեցվածքով: Նա քսանյոթ տարի է, ինչ այստեղ էր աշխատում, իսկ մինչ այդ տասնինը տարի՝ Նյու Յորքի «Կապույտ լուսին» սրճարանում: Հիմա Արմենակը դժվար էր տանում գիշերվա վերջին ժամերի ծանրությունը: Վաթսունհինգ տարիների կյանք, քառասուն և ինը տարիների աշխատանք: Բոլոր հայերի նման նա էլ էր անցել գաղթի երկար ու տանջալից ճանապարհներով՝ Կովկասից Հունաստան և Հունաստանից նավով՝ Ամերիկա: Ճաշարանի տերը՝ իրանահայ վտարանդի Էրիք Բագաջանյանը ևս հրաշալի մարդ էր, որն առանձնահատուկ սրտացավ վերաբերմունք ուներ իր հայրենակիցների հանդեպ: Ճաշարանի հաճախորդների համար այս երկու հայերի ներկայությունը մշտապես ստեղծում էին ջերմության, հարգանքի և մտերմության յուրատիպ միջավայր:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո առանձնակի կարեվորություն ստացան Իրան-իրաքյան պատերազմի թեմաները, որոնց հիմքում դրված է հերոսության և նահատակության աշխարհզգա-ցողությունը: Այդպիսի թեմա է շոշափում Իբրահիմ Հասանբեյգի «Մասիհի առեղծվածը» պատմվածքը: Իրաքի Մոսուլ-3 ճամբարում պարսիկ ռազմագերիների մեջ էր նաև հայկական ծագում ունեցող կանաչաչյա, սպիտակամորթ, փոքրամարմին Մասիհը[10], որն իր հե-

---

[7] **Բայբուրդյան Վ.,** *Նոր Ջուղա, Ե., 2007, էջ 11:*

[8] *Տե՛ս* **Ֆարխոնդե Աղայի**, *Ամուխթ ազ շեյթան վա սուզանադ, Թեհրան, 2005:*

[9] *Է. Ֆասիհը հայտնի է «Սորրայան անզգայության մեջ» (1983), «Ժամանակի գերին»(1994) վեպերով:*

[10] *Քրիստոնյա (պարսկերեն):*

ռոսական, անկոտրում, խիզախ վարքաքաղաքով հարգանքի մեծ զգացում էր առաջացնում ընկերների մեջ: Անհնազանդ պահվածքի համար հայ զինվորին տեղափոխում են «Ռաշիդ» գաղութ, որտեղ Սադամի պատվին «Ողջույն» ասելուց հրաժարվելու պատճառով նա ենթարկում է անմարդկային խոշտանգումների: Գերությունից տուն վերադառնալուց հետո Մասիհի մահը առեղծված է մնում պարսիկ ընկերներից շատերի համար: Հարգելով նրա հիշատակը՝ ընկերներն այցելում են նրա ծեր ծնողներին և հաճախում հայկական եկեղեցի: Սակայն տարիներ անց ոչ ոք չէր հիշում այն հայ նվիրյալ զինվորի՝ Ալբերտ Մինասյանի անունը, որը պատրաստ էր հանուն Իրանի նահատակվելու: «Ալբերտ Մինասյան» անունը հեղինակը բացահայտում է միայն վերջին հատվածում: Նշենք նաև, որ Իրանի միապետության դեմ պայքարող հայ նահատակված զինվոր Վարդան Սալախանյանին[11] է նվիրված Ա. Շամլուի «Նազլիի մահը» հուզիչ բանաստեղծությունը:

Հայի կերպարն ուսումնասիրելիս անվիճելի հետաքրքրություն է ներկայացնում իրանական նորարարական վիպագրության մեծանուն ներկայացուցիչ Շահրնուշ Փարսիփուրի՝ 2008-ին լույս ընծայած «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը: Արձակագիրը համաշխարհային գրականագիտական շրջանակներում հայտնի է 1990-ական թվականներին հրատարակած «Թուբան և գիշերվա խորհուրդը» և «Կանայք առանց տղամարդկանց» վեպերով, որոնք դարձան ստեղծագործողի գրական այցեքարտը[12]: «Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը ժամանակային առումով լայն ընդգրկում ունի՝ Փեհլևիների կառավարման տարիներից մինչև իսլամական հեղափոխություն (1926-1979 թթ.): Գլխավոր հերոսուհին՝ Ասիյեն աղախին էր մեծահարուստների տներում և երազում էր ունենալ իր սեփական անկյունն ու զգալ ընտանիքի բերկրանքը: Ողջ կյանքում սիղեի[13] կարգավիճակում հայտնված գեղեցկատես, երիտասարդ կինը իր ապրած դառը տարիների ընթացքում միայն մեկ անգամ է հանդիպում այն ազնիվ, բարի և առաքինի տղամարդուն՝ հայազգի Արտաշեսին, որը պատրաստ էր ամուսնանալ ու հոգ տանել Ասիյեի

---

[11] Վարդան Սալախանյանը 1953 թ. հեղաշրջման փորձի ժամանակ ձերբակալվում է և դաժանորեն սպանվում՝ չմատնելով իր ընկերներին: Նրա խոշտանգված մարմինը կորցնելու նպատակով՝ իշխանությունը նրա դին նետում է Ջարջարուդ գետը:

[12] «Կանայք առանց տղամարդկանց», «Թուբան և գիշերվա խորհուրդը» վեպերի հիման վրա պարսիկ հանրաճանաչ կինոբեմադրիչ Շիրին Նեշաթի նկարահանած յուրօրինակ շարժանկարները շարունակում են ցուցադրվել միջազգային մի շարք հեղինակավոր կինոփառատոներում: Ամերիկաբնակ արտիստուհի, կինոբեմադրիչ Շիրին Նեշաթին 2006-ին շնորհվեց համաշխարհային արվեստի ոլորտում մեծ հեղինակություն ունեցող Լիլիան Գիշի անվան պատվավոր մրցանակը: Աշխարհի արվեստասեր հասարակայնությանը Նեշաթը հայտնի է «Ալլահի կանայք», «Թուբա», «Մահդոխթ» (2004), ┐Զարին» (2005), «Մունիս» (2008), «Ֆահզիե» (2008) ստեղծագործություններով: 2009 թ. Վենետիկի հեղինակավոր կինոփառատոնում Շ. Փարսիփուրի «Կանայք առանց տղամարդկանց» վեպի հիման վրա էկրանավորված համանուն գեղարվեստական ֆիլմը Շ. Նեշաթին բերեց «լավագույն կինոբեմադրիչ» մրցանակը:

[13] Ժամանակավոր ամուսնության մեջ գտնվող կին (պարսկերեն):

մասին: Հերոսուհին, որն անգամ կրթություն չուներ և կարծում էր, որ մուսուլման կինը չի կարող ամուսանանալ քրիստոնյա տղամարդու հետ, մերժում է Արտաշեսին: Տարիներ անց, զգալով իր սխալը, Ասիյեն փորձում է գտնել նրան, սակայն ապարդյուն: Այս անգամ Ասիյեն սգում է Արտաշեսի վաղաժամ մահը և հեկեկում նրա շիրմի առաջ՝ հիշելով այն երկու ծանր օրերը, երբ աշխարհի բուռ անտարբերությունից դառնացած, միայնակ, նորածինը գրկին՝ ապաստան էր գտել Արտաշեսի փոքրիկ հյուրանոցում, որտեղ հայ տղամարդը իրեն վայել առաքինությամբ, բարությամբ հոգ էր տարել դժբախտ կնոջ մասին և վերջինիս կյանքում առաջին անգամ պարուրել էր սիրով ու ջերմությամբ:

«Ասիյեն երկու աշխարհների միջև» վեպը խորը համակրանքի արտահայտություն է հայ ժողովրդի հանդեպ: Արձակագիրը Արտաշեսի կերպարը կերտում է մեծ վարպետությամբ՝ ընդգծելով հայի ազգային դիմագծին հարիր աշխարհասիրությունը, ազնվությունը, բարությունը, սերը դեպի լույսն ու գիտությունը:

Այսպիսով, արդի Իրանի առաջադեմ գրողների ստեղծագործություններում հայի կերպարներն առանձնանում են մարդկային բարձրը, բարոյական հատկանիշներով:

ОБРАЗ АРМЯНИНА В СОВРЕМЕННОЙ ИРАНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

САФРАСТЯН Л. М.

Резюме

К образу армянина в своих произведениях обращались такие крупные представители современной иранской прозы, как Мохаммад Али Джамалзаде, Бозорг Алави, Садек Хедаят, Шахрнуш Парсипур, Муниру Раванипур и др., а также один из зачинателей течения “новой поэзии” Ахмад Шамлу.

Образ армянки интерпретировался как воплощение материнского начала. Армянский мужчина в произведениях иранских авторов предстает как мужественный, честный, верный долгу человек, на которого могут положиться как его семья, так и его страна, а женщина являет собой преданность как семейным, так и национальным ценностям.

Наделение образа армянина в литературе многими положительными чертами позволяет заключить, что современная иранская интеллигенция питает чувство глубокого уважения к армянскому народу.